ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ·


ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am

Հաշվետվություն թիվ 152, 04.04.2017թ.

| | | | |
|---|---|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, | պարտատոմս | պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,760,731 հատ, | 40,000 հատ | 280.000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, | 10,000 ՀՀ դրամ | 25 ԱՄՆ դոլար |

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և սպույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Կարեն Հակոբյան | Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ | | 04.04.17 |
| Զարուհի Մելքոնյան | Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ | | 04.04.17 |
| Սուրեն Կարապետյան | Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ | | 04.04.17 |
| Տիգրան Գալստյան | Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ | | 04.04.17 |
| Կարեն Սարգսյան | Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ | | |
| Բագրատ Ճգմաչյան | Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ | | 04.04.17 |
| Դավիթ Հարությունյան | Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ | | 04.04.17 |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Աշոտ Օսիպյան | Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն | | 04.04.17 |

04 ապրիլի 2017թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Նաիրիտ մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2017 թվականի ապրիլի 3-ի թիվ 06/01Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102 – 06/01Լ
Դաս: ՀՊ
«03» ապրիլի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՆԱԻՐԻՏ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^6$-ի 1-ին մասի ժը) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1 կետի ի) ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բանկի Նաիրիտ մասնաճյուղն ի սկզբանե ստեղծվել է «Նաիրիտ գործարան» ՓԲ ընկերության սպասարկման, ինչպես նաև տարածքային ցանցի և մանրածախ բանկային ծառայությունների մատուցման ընդլայնման նպատակով, սակայն հիմք ընդունելով մասնաճյուղի նախորդ երկու տարիների՝ 2015 և 2016 թվականների տարեկան արդյունքները, 2017 թվականի մարտի 15-ի դրությամբ շահույթի ձևավորման վերլուծությունը, ինչպես նաև հաշվի առնելով «Նաիրիտ գործարան» ՓԲ ընկերության գործունեության դադարեցումը, մասնաճյուղի հետագա գործունեության իրականացման մասին, Բանկի խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Նաիրիտ մասնաճյուղի գործունեությունը դադարեցնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվության վերաբերյալ որոշման ընդունման հաջորդ օրվանից:
2. Հանձնարարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գործադիր տնօրեն Ա.Օսիպյանին ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Նաիրիտ մասնաճյուղի գործունեության դադարեցման հետ՝ կապված գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Բարսեղ Բեգլարյան

ARARATBANK ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 02500518